ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022 Թ.

# ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

**ՊԱՏՐԱՍՏՎԻ՛Ր**

Նախքան համաժողովի սկսվելը, դուք կարող եք պատրաստվել, որպեսզի լսեք Տիրոջ ձայնը՝ փնտրելով ձեր անձնական հայտնությունը:

- ○ Արդյո՞ք ժամանակ եմ հատկացրել անձնական աղոթքի համար:
- ○ Արդյո՞ք ես կարդացել եմ իմ սուրբ գրությունները:

«Ես հրավիրում եմ ձեզ համաժողովի ընթացքում ուշադրություն դարձնել այս երեք կետերի վրա՝ մաքուր ճշմարտություն, Քրիստոսի մաքուր վարդապետություն և մաքուր հայտնություն: Ես կարող եմ հավաստիացնել, որ այն, ինչ կլսեք այսօր և վաղը, մաքուր ճշմարտություն է»:

*Նախագահ Ռասսել Մ. Նելսոն*[1]

# ՀԱՐՑՐԵ՛Ք,

«Հայտնությունը գրեթե միշտ ստանում ենք ի պատասխան որևէ հարցի»:

*Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ*[2]

## իսկ հետո լսե՛ք

«Ձեզ տանջող հարցերի համար տրվող մաքուր հայտնությունը այս համաժողովը կդարձնի արդյունավետ և անմոռանալի: Եթե դուք դեռ չեք փնտրել Սուրբ Հոգու սպասավորությունը, որն օգնում է ձեզ լսել այն, ինչ Տերը կկամենար, որ դուք լսեիք այս երկու օրվա ընթացքում, ես ձեզ հրավիրում եմ անել դա հիմա»:

*Նախագահ Ռասսել Մ. Նելսոն*[3]

**Ի՞նչ եք մտածում**

Մտածեք, թե ի՞նչ մտքեր, հարցեր կամ մտահոգություններ ունեիք: Դուք կարող եք գրել այստեղ և հիշել դրանք, երբ լսում եք համաժողովը: Նույնիսկ, եթե մտքում որևէ հստակ միտք չունեք, Տերը կօգնի ձեզ սովորելու և աճելու ուղիներ գտնել, երբ ջանք գործադրեք լսելու Նրան:

Ահա մի քանի օրինակ և տարածք՝ ձեր անձնական մտքերը գրելու համար.



# ՆՇՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵ՛Ք

Ցույց տվեք Տիրոջը, որ դուք պատրաստ եք ստանալ հայտնություն և գործել համաձայն դրա՝ կենտրոնանալով Հոգուն լսելու և ձեր մտածածն ու զգացածը գրի առնելու վրա: Մի անհանգստացեք, եթե չհասցնեք գրի առնել ելույթի ամեն մանրուք: Դուք միշտ կարող եք վերադառնալ և կարդալ կամ դիտել այս ելույթները ավելի ուշ:

---

«Մորմոնի Գրքում [նշումներ կատարելու համար] մեծ համանմանություն կա: Կան մեծ թիթեղները, որոնք ժողովրդի պատմությունն են, և փոքր թիթեղները, որոնք հայտնություններ և սուրբ գրություններ են: Եթե ելույթ լսող մարդը . . . նշում է, թե ինչ է ասում այդ մարդը, ապա մեծ թիթեղների վրա դուք գրանցում եք ժողովի պատմությունը: Եթե դուք գրանցում եք անհատական տպավորությունները, որոնք գալիս են ձեզ Սուրբ Հոգուց, դուք ստեղծում եք ձեր սեփական փոքր թիթեղները»:

*Երեց Դեյվիդ Ա. Բեդնար*[4]

Նրանք ի՞նչ ուսուցանեցին.

Իմ զգացմունքներն ու տպավորությունները.

**ԼՍԵՔ ՀՈԳՈՒՆ: Ի՞ՆՉ ԵՔ ԶԳՈՒՄ:**

«Եթե մենք ստանում ենք միայն այն, ինչ ներկայացնում է ուսուցիչը, մենք բաց ենք թողնում այն, ինչն ամենակարևորն է»:

*Երեց Դեյվիդ Ա. Բեդնար*[5]

Նրանք ի՞նչ ուսուցանեցին․



**ՆՇՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՍԽԱԼ ՁԵՎ ՉԿԱ**

Դժվարանո՞ւմ եք կենտրոնանալ: Փորձեք անհատականացնել ձեր նշումները: Ավելացրեք որոշ նկարներ, ստեղծագործական տառեր կամ նկարազարդումներ, որոնք կօգնեն ձեզ հիշել պատմությունները, մեջբերումները կամ հուշումները, որոնք ինչ-որ նշանակություն ունեն ձեզ համար:

*Սիրեցե՛ք միմյանց. ինչպես ես ձեզ սիրեցի:*



Իմ զգացմունքներն ու տպավորությունները.

**ԴԱԴԱ՛Ր ՏՎԵՔ:**

Դուք մինչ այս պահը ստացե՞լ եք ձեր հարցերի պատասխանները: Եթե ստացել եք, ապա մի պահ ժամանակ գտեք և գրեք ձեր ստացած առաջնորդությունն ու ցուցումները:

«Խոստանում եմ ձեզ, որ երբ լսեք ձեզ ուղղված Տիրոջ ձայնը այս գերագույն համաժողովի ելույթների մեջ, իսկ հետո շարժվեք ըստ հուշումների, դուք Աստծո աջը կզգաք ձեր գլխին, և կօրհնվի ձեր ու ձեզ շրջապատողների կյանքը»:

*Երեց Նիլ Լ. Անդերսեն*[6]

«Այդ երկու բառով՝ «Լսի՛ր Նրան», Աստված մեզ տալիս է հաջողության, երջանկության և ուրախության օրինակն այս կյանքում: Մենք պետք է *լսենք* Տիրոջ խոսքերը, *ականջ դնենք* դրանց և *ուշք դարձնենք* նրան, ինչ Նա ասել է մեզ»:

*Նախագահ Ռասսել Մ. Նելսոն*[7]

Նրանք ի՞նչ ուսուցանեցին.

Իմ զգացմունքներն ու տպավորությունները.

# ԻՍԿ ՀԻՄԱ Ի՞ՆՉ

Համաժողովի ավարտից հետո ժամանակն է աշխատել այն բաների վրա, որոնք լսել և զգացել եք: Ահա մի քանի հարցեր, որոնք կօգնեն ձեզ սկսել.

- ◯ Ինչի՞ վրա կարող եմ կենտրոնանալ առաջ շարժվելիս:
- ◯ Կա՞ իմ կյանքում որևէ բան, որը ես զգում եմ՝ պետք է փոխել:
- ◯ Ո՞ր հուշումներին եմ լսելու և գործելու ըստ դրանց:
- ◯ Ինչպե՞ս ես հետևեցի Լսիր Նրան կոչին համաժողովի ժամանակ:
- ◯ Ինչպե՞ս կարող եմ հետևել Լսիր Նրան կոչին իմ առօրյա կյանքում:

Արդյո՞ք ուրախ եք համաժողովի ձեր գրառումների համար: Արդյո՞ք ունեք նկարներ կամ նկարազարդումներ, որոնցով կարող եք կիսվել սոցիալական լրատվամիջոցներում: Կիսվեք դրանցով մեզ հետ: Ձեր գրառումների նկարը ուղարկեք ftsoy@ChurchofJesusChrist.org հասցեին կամ տեղադրեք դրանք Instagram-ում և նշեք @strivetobe էջը:

«Ձեր հատուկ աղոթքների պատասխանները կարող են գալ անմիջապես որևէ ելույթից կամ արտահայտությունից: . . . Խորհրդին հետևելու անկեղծ ցանկությունը կպատրաստի անձնական հայտնության ուղին»:

*Երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆ*[8]

**ԱՎԵԼԻ ՇԱՏ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ԿԱՐԻՔ ԿԱ՞:**

Ներբեռնեք և տպեք այս հուշատետրը **conference.ChurchofJesusChrist.org**-ից:

**Հղումներ**


1. Ռասսել Մ. Նելսոն, «Մաքուր ճշմարտություն, մաքուր վարդապետություն և մաքուր հայտնություն», (*Ensign* կամ *Լիահոնա*, նոյ. 2021, 6):
2. Jeffrey R. Holland, "Cast Not Away Therefore Your Confidence," *Ensign*, Mar. 2000, 9.
3. Ռասսել Մ. Նելսոն, «Մաքուր ճշմարտություն, մաքուր վարդապետություն և մաքուր հայտնություն», (6–7):
4. David A. Bednar, "Create Your Own Small Plates" (video), ChurchofJesusChrist.org.
5. David A. Bednar, "Create Your Own Small Plates."
6. Նիլ L. Անդերսեն, 2017 թ. հոկտեմբերի գերագույն համաժողով (*Ensign* կամ *Լիահոնա*, նոյեմբեր 2017, 126):
7. Ռասսել Մ. Նելսոն, «Լսիր Նրան», 2020 թ. ապրիլի գերագույն համաժողով (*Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2020, 89):
8. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Գերագույն համաժողով՝ ոչ սովորական օրհնություն», *Ensign* կամ *Լիահոնա*, նոյեմբեր 2011, 4:



© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved.

ԱՅՍ ԳՐՔՈՒՅԿԻ ՎԵՐԱՏՊՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏՐՎՈՒՄ Է ԱՆՁՆԱԿԱՆ, ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: ՍԱ ՆԵՐԱՌՈՒՄ Է ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԾԽԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ՝ ՏՊԵԼՈՒ ՓՈՔՐ ԹՎՈՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՒՄ ԻՐԵՆՔ ԾԱՌԱՅՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ: ԳՐՔՈՒՅԿՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՏՊԱԳՐՎԵՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ: ՍԱ ՉԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԱՅԴ ՆՅՈՒԹԸ ԱՌՑԱՆՑ ՑՈՒՑԱԴՐԵԼՈՒ, ՈՒՐԻՇ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՄ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ: ԱՅՍ ՆՅՈՒԹԻ ՈՐԵՎԷ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ:

**permissions.ChurchofJesusChrist.org**



ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ